# <ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ> ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՍՄԱՓԿ-ԳՀ ԱՊՁԲ-18/2

ք. Գորիս

«27» հուլիս 2018թ.

<Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան> ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Ա.Առաքելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <ՎԻՈԼԱ> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Մեժլումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ախտորոշիչ նյութերը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռքբերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | <Վիոլա> ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Գորիս, Օրբելյանների 5 | ք.Երևան, Աճառյան 2 նրբ., թիվ 3 |
| Բանկ՝ <Արդշինբանկ> Գորիս մ/ճ | <Ամերիաբանկ> ՓԲԸ |
| Հ/Հ 247570266319 | h/h 1570001092880100 |
| ՀՎՀՀ 09205924 | ՀՎՀՀ 00801026 |
| ---------------------------- (ստորագրություն) | ---------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« » հուլիս 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 33211320 | /Հեպատիտ Բ/ HBsAg 96t իմունոֆերմենտային | ООО <Научно-производственное обьединенуе <Диагностические системы>, Ռուսաստանի Դաշնություն | Հեպատիտ B վիրուսի որոշման տեստհավաքածու Մեթոդ: իմունոֆերմենտային : Ֆորմատ 96թեստ: Նախատեսված Ստատ ֆաքս սարքի համար: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | տուփ | 18960 | 113760 | 6 | Ք.Գորիս, Օրբելյաների 5 | 6 | 01.08-15.12.2018թ. |
| 2 | 33211320 | Հեպատիտ B կորային /գումարային հակամարմինների/ HBc Ab 96t իմուն. | ООО <Научно-производственное обьединенуе <Диагностические системы>, Ռուսաստանի Դաշնություն | Հեպատիտ Բ վիրուսի անտիգենի նկատմամբ հակամարմինների որակական որոշման թեստ-հավաքածու HBc антиген Մեթոդ: իմունոֆերմենտային անալիզ Ֆորմատ: 96 որոշում (12x8 բջիջ): Ստուգվողնմուշ: արյան շիճուկ/պլազմա: Նախատեսված Ստատ ֆաքս սարքի համար: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար | տուփ | 20160 | 201600 | 10 | Ք.Գորիս, Օրբելյաների 5 | 10 | 01.08-15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | | | | | | | |
| 3 | 33211230 | Սիֆիլիսի որոշման տեստ /TPHA-200t/ | ООО <Научно-производственное объединение <Диагностические системы>, Ռուսաստանի Դաշնություն | Սիֆիլիսի որոշման տեստ հավաքածու (Syphilis TPHA) Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ հավաքածույում թեստերի քանակը 200թեստ (2x100թեստ): Սիֆիլիսի որոշման թեստ հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 | տուփ | 40320 | 120960 | 3 | Ք.Գորիս, Օրբելյանների 5 | 3 | 01.08-15.12.2018թ. |
| 4 | 33211230 | Սիֆիլիսի որոշման տեստ /RPR Carbon-150t/ | Lab-Care Diagnostics Ltd, Հնդկաստան | Սիֆիլիսի որոշման տեստ հավաքածու (Syphilis RPR Carbon-150) Մեկ հավաքածույում թեստերի քանակը 150թեստ կամ համարժեք: Սիֆիլիսի որոշման թեստ հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար | տուփ | 6960 | 20880 | 3 | Ք.Գորիս, Օրբելյանների 5 | 3 | 01.08-15.12.2018թ. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 | | | | | | | |
| 5 | 33211280 | Բրուցելոզի որոշման տեստ /Roze Bengal 50t/ | Immunostics, Inc ԱՄՆ | Բրուցելյոզի որոշման տեստ հավաքածու (RB – 50) Մեթոդ: ագլյուտինացիա, սկրինինգի համար Մեկ հավաքածույում թեստերի քանակը 50թեստ: Բրուցելյոզի որոշման թեստ հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Յանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար | տ ո ւ փ | 13920 | 139200 | 10 | Ք.Գորիս, Օրբելյաններ ի 5 | 10 | 01.08-15.12.2018թ. |
| 6 | 33211190 | Anti-A Serum Անտի Ա 200 test/ | Lab-Care Diagnostics Ltd, Յնդկաստան | Արյան խմբի (II) որոշման տեստ (Մեթոդ: հեմագլյուտինացիա Ֆորմատ: 10մլ Ստուգվող նմուշ: արյուն Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 | տ ո ւ փ | 950 | 3800 | 4 | Ք.Գորիս, Օրբելյաններ ի 5 | 4 | 01.08-15.12.2018թ. |
| 7 | 33211200 | Anti-B Serum Անտի Բ 200 | Lab-Care Diagnostics Ltd, | Արյան խմբի (III) որոշման տեստ Մեթոդ: հեմագլյուտինացիա | տ ո ւ փ | 950 | 3800 | 4 | Ք.Գորիս, | 4 | 01.08- |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | test/ | Հ ն դ կ աս տան | Ֆորմատ: 10մլ<br>Ստուգվող նմուշ: արյուն<br>Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս:<br>Որակի սերտիֆիկատներ` ISO13485 | | | | | Օ ր բ ե լ յ ա ն ն ե ր ի 5 | | 15.12.2018թ. |

**Գ Ն Ո Ր Դ**

«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
Հասցե` ք. Գորիս, Օրբելյանների 5
Բանկ` <Արդշինբանկ> Գորիս մ/ճ
Հ/Հ 247570266319
ՀՎՀՀ 09205924

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

<Վիոլա> ՍՊԸ
ք.Երևան, Աճառյան 2նրբ., թիվ3
<Ամերիաբանկ> ՓԲԸ
հ/հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«28» հուլիս 2018 թ. կնքված
ՍՄԱՓԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 33211320 | /Հեպատիտ Բ/ HBsAg 96t իմունոֆերմենտային | 18960 | 18960 | 18960 | 94800 | 113760 | 113760 | |
| 2 | 33211320 | Հեպատիտ B կորային /գումարային հակամարմինների/ HBc Ab 96t իմուն. | 40320 | 40320 | 40320 | 141120 | 201600 | 201600 | |
| 3 | 33211230 | Սիֆիլիսի որոշման տեստ /TPHA-200t/ | 40320 | 40320 | 40320 | 80640 | 120960 | 120960 | |
| 4 | 33211230 | Սիֆիլիսի որոշման տեստ /RPR Carbon-150t/ | 6960 | 6960 | 6960 | 13920 | 20880 | 20880 | |
| 5 | 33211280 | Բրուցելոզի որոշման տեստ /Roze Bengal 50t/ | 27840 | 27840 | 27840 | 97440 | 139200 | 139200 | |
| 6 | 33211190 | Anti-A Serum Անտի Ա 200 test/ | 950 | 950 | 950 | 1900 | 3800 | 3800 | |
| 7 | 33211200 | Anti-B Serum Անտի Բ 200 test/ | 950 | 950 | 950 | 1900 | 3800 | 3800 | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
Հասցե` ք. Գորիս, Որբեւյանների 5
Բանկ` «Արդշինբանկ» Գորիս մ/ճ
Հ/Հ 247570266319
ՀՎՀՀ 09205924

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Վիոլա» ՍՊԸ
ք.Երևան, Աճառյան 2նրբ., թիվ3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

*2018 թ. կնքված*
*ՍՄԱՓԿ-ԳՅԱՊՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ____________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«24» հուլիս 2018 թ. կնքված
ՍՄԱՓԿ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________
(Գնորդի անվանումը) (Վաճառողի անվանումը)
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20__ թ. ______________________ -ին կնքված N ______________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն